

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԵՐԳՈՒԹԵԱՆ»
ԵՐԿԻ ԻՆՔՆԱԳՐԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Ա. Ա. ՂԱԶԻՆՅԱՆ

Այս վերնագրով հոդված է տպագրել բանասեր Շ. Լ. Նազարյանը «Պատմա-բանասիրական հանդեսում» (1987, № 4, էջ 104—112)։ Հոդվածը գրելու առիթ է հանդիսացել Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի գիտաքննական նոր բնագրի հրատարակությունը, որը լույս է ընծայել ՀԽՍՀ ԳԱ հրատարակությունը 1985 թ.՝ բանասերների Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի աշխատասիրությամբ։

Իր հոդվածում Շ. Նազարյանը անդրադառնում է Նարեկացու Մատյանի 1774 թ. Կոստանդնուպոլսի տպագրությանը, այդ տպագրության համար օգտագործված ձեռագրերի մեջ Նարեկացու Մատյանի ինքնագրի առկայության և այն տպագրության հիմքում դրված լինելու խնդրին։ Հիմնավորելու համար իր տեսակետը՝ նա քննում է Հակոբ վարդապետի մի նամակը 1774 թ. տպագրության համար ձեռք բերված մի ձեռագրի մասին, որը համարվել է Նարեկացու ինքնագիրը, ինչպես նաև անդրադառնում է Մարտիրոս սարկավազի մի ծանուցմանը, ուր շոշափվում է նույն խնդիրը և, վերջապես, աշխատասիրողներին դիտողություն է անում հնատիպ հրատարակությունների, այդ թվում և 1774 թ. տպագրության տարբերակները ծանոթագրություններում և ոչ թե ձեռագրական տարբերակների բաժնում տալու համար։

Այսպես, ուրեմն, առաջին հարցը վերաբերում է Մատյանի 1774 թ. Կոստանդնուպոլսի տպագրությանը։ Թե ինչպես է իրականացվել այդ տպագրությունը, ինչ ջանք ու աշխատանք են թափել հրատարակիչները, ինչ տեղ է գրավում այն Մատյանի նախորդ և հետագա տպագրությունների շղթայում, նոր բնագրի պատրաստման համար այդ տպագրությունից ինչ են ընդունել և ինչ են մերժել աշխատասիրողները, — այս և հարակից այլ հարցեր մանրամասնորեն տրված են գիտաքննական նոր հրատարակության ծավալուն առաջաբանում և ծանոթագրությունների մեջ։ Հենց այս իրողության հավաստմամբ էլ Շ. Նազարյանը սկսել է իր հոդվածը, գրելով, որ «Նարեկագրերը այդ տպագրությունը իրավացիորեն գնահատում են խոր և ամենակատարյալը մինչ այդ եղած տպագրությունների մեջ»¹, որ այն նշանավորել է նոր մակարդակ Նարեկացու երկի հին հրատարակությունների պատմության մեջ և տիպար է դարձել հետագա տպագրությունների համար, — այստեղ ներողություն խնդրելով Շ. Նազարյանից՝ լրացնենք նրա մեջբերման բաց թողնված մասը, — «մինչև Վենետիկի 1840 թ. հրատարակության երևան գալը»²։ Թե՛ աշխատասիրողները և թե՛ Շ. Նազարյանը բարեխղճորեն նշում են, որ 1774 թ. տպագրությունն իրականացվել է բազմաթիվ մարդկանց ջանքերով, որ աշխատանքը տևել է տարիներ, որ հրատարակիչներն իրենց ձեռքի տակ ունեցել են շուրջ երեսուն ձեռագիր, որոնց մեջ, ինչպես

¹ «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 4, էջ 104, (Այսուհետև՝ Շ. Նազարյան, նշվ. հոդվածը)։

² Գրիգոր Նարեկացի. Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի. Երևան, 1985, էջ 205, (Այսուհետև՝ Գրիգոր Նարեկացի. Մատեան ողբերգութեան)։

ասված է «Բան առ բարեմիտ ընթերցող մատենիս» առաջաբանում, եղել են «ընտիր», «հնագոյն» և «անձեռամբերձ» օրինակներ, ավելին՝ դրանցից երկուսը համարվել են նարեկացու ինքնագրեր՝ «յորոց զերկուցն սրբոյս իսկ պնդէին լինիլ ձեռաց գիր»³:

Մինչև այստեղ տարակարծություն չկա աշխատասիրողների և Շ. Նազարյանի մոտեցման և գնահատման միջև: Տարակարծությունը սկսվում է նարեկացու ինքնագրերի մասին ասվածից: Իսկապես՝ հրատարակիչների ձեռքի տակ եղել է նարեկացու ինքնագիրը և այն էլ՝ երկուսը: Ինչի՞ հիման վրա են ումանք, — րայց ակնհայտորեն ոչ իրենք՝ հրատարակիչները, — պնդել, որ կան այդպիսի ձեռագրեր: Գիտաքննական նոր բնագրի աշխատասիրողները ոչ թե շրջանցել, այլ հանգամանորեն շոշափել են այս և հարակից այլ հարցեր: Ըստ աշխատասիրողների՝ 1774 թ. տպագրության հրատարակիչները չեն ունեցել նարեկացու ինքնագիրը, այլ բավարարվել են միայն հայտարարությամբ՝ առանց բանասիրական որևէ կոպան բերելու⁴: Մինչգեո Շ. Նազարյանը գտնում է, որ «Հայերեն ձեռագիր և տպագիր մի շարք մատյաններում պահպանվել են նյութեր, տեղեկություններ, որոնք օգնում են հիմնավորելու 1774 թ. Պոլսում տպագրված «Նարեկի» հիմքում նարեկացու ինքնագիրը լինելու վերոհիշյալ փաստը»⁵: Այստեղ «վերոհիշյալ փաստը» համարված է տպագրության առաջաբանում ասված այն պնդմանը, թե երկու ձեռագիր համարվել են նարեկացու ինքնագիր: Այստեղ է, ահա, տրամադգորեն հակառակ կարծիքների սահմանաբաժանը: Ասում են՝ ճշմարտությունը ծնվում է կարծիքների բախումից: Ուրեմն՝ ո՞վ է իրավացի, ո՞րն է ճշմարտությունը:

Այստեղ ևս փոքր-ինչ պիտի շեղվեմ հարցի ուղղակի քննությունից՝ խնդրի էությունն առավել մոտենալու համար: Գիտաքննական ամեն մի հրատարակության հիմնական նպատակն է որքան հնարավոր է ստույգ ներկայացնել գրական հուշարձանի հեղինակային բնագիրը: Նոր ժամանակներին, դասական հեղինակների համար, որոնց երկերի ինքնագրերը, առաջին տպագրությունները, հեղինակային սրբագրությունները, վերամշակությունները, սևագրությունները և այլն հասել են մեզ, համեմատաբար հեշտ է իրականացնել այդ նպատակը: Այլ է վիճակը, երբ մենք գործ ենք ունենում հին և միջնադարյան հեղինակների երկերի հետ: Նրանց երկերը, իբրև կանոն, մեզ են հասել ձեռագիր մատյաններով՝ տարբեր ժամանակների տարբեր գրիչների ընդօրինակություններով և, բնականաբար, քիչ չեն անխառնափելի վրկպումները, սխալները, աղճատումները, բացթողումները, շփոթությունները և այլ կարգի թերությունները: Անշուշտ, բացառիկ երևույթ է հեղինակի ինքնագիրը և նման երջանիկներից է Սայաթ-Նովան, որի Դավթարը հասել է մեզ: Ինչ վերաբերում է նարեկացուն, ապա նոր բնագրի աշխատասիրողների խորին համոզմամբ ճերկայումս հայտնի չէ մի ձեռագիր, որը բանասիրությունը իսկապես համարեր նարեկացու ինքնագիրը⁶:

Մատյանը մեզ է հասել բազմաթիվ ընդօրինակություններով՝ լրիվ, թերի և քաղվածո: Դրանց մեծագույն մասը գտնվում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում: Տարբեր քանակությամբ ձեռագրեր կան Երուսաղեմի, Վենետիկի, Վիեննայի, Փարիզի, Լենինգրադի, Թբիլիսիի և այլ վայրերի գրապահոցներում, ինչպես նաև առանձին անհատների մոտ: Աշխատասիրողները, բացի Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից, օգտվել են նաև մի շարք ձեռագրերի մանրաժապավեններից, որոնք ստացվել են տարբեր քաղաքներից և, ամենց շատ, Երուսաղեմից: Նրանք ուսումնասիրել, նկարագրել և խմբավորել են 159 ձեռագիր, որոնցից գիտաքննական նոր բնագիրը պատրաստելու համար ընտրել են 61 ձեռագիր՝ ձեռագրերի համեմա-

³ Դիրք ազգից սրբոյն Դրեգորի Նարեկացույ հոգեկիր հոգատրի. Կ. Պոլիս, 1774, էջ 12:

⁴ Դրիգոր Նարեկացի. Մատենան ողբերգութեան, էջ 176—177:

⁵ Շ. Նազարյան. նշվ. հոդվածը, էջ 105:

⁶ Դրեգոր Նարեկացի. Մատենան ողբերգութեան, էջ 177:

տուժյան հիմքում դնելով Մատենադարանի № 1568 մագաղաթյա մատուցանի ընդօրինակությունը, որը ստույգ տարեթիվ ունեցող հնագույն ձեռագիրն է աշխարհում, գրված 1173 թ. Կիլիկիայում, Սկևռա վանքում, պատկանել է նշանավոր մատենագիր և հասարակական-եկեղեցական գործիչ Ներսես Լամբրոնացուն (1153—1198), գրիչն ու ծաղկողն է Գրիգոր Սկևռացին՝ հայտնի նաև Մլիճեցի մականվամբ։ Ձեռագրում կա նարեկացու վարքը՝ Լամբրոնացու հեղինակությամբ և ինքնագրով։ Համեմատության համար օգտագործված ձեռագրերը բաժանվում են երեք մեծ խմբի։ Նմբավորման համար մի դեպքում հիմք ենք ընդունել ԿԳ—ԿԴ գլուխների հակառակ (ԿԳ—ԿԲ) հաջորդականությունը, երկրորդ դեպքում՝ Զ, Ժ, ԺԲ գլուխների այն հատվածները, որոնք հատուկ են միայն ձեռագրական տվյալ խմբին, երրորդ դեպքում՝ այն ձեռագրերը, որոնց մեջ պահպանված է ԿԲ—ԿԴ գլուխների ճիշտ կարգը և տարբերակիչ այլ հատկանիշներ։ Ձեռագրական այդ խմբերը ունեն փոխադարձ աղբյուրներ և մի խմբի առանձին հատկանիշներ կարելի է նկատել նաև մյուս խմբի մեջ, որոնք սակայն, մի ձեռագիր մերձեցնելով մեկ այլ ձեռագրի, երեք չեն վերածվում նույնության և չեն խախտում խմբի ընդհանուր պատկերը։ «Գրիչների համար բնորոշն այն է.— ասված է գիտաբանական նոր բնագրի առաջաբանում,— որ նրանք բնագիրն ընդօրինակել են ոչ թե ըստ մեկ ձեռագրի, այլ սկզբից ևեթ իրենց տրամադրության տակ ունեցել են երկու և ավելի օրինակներ և, դրանցից մեկին կամ մյուսին առավելություն տալով հանդերձ, նրա թերությունները, կասկածելի ընթերցվածներն իրենց ընդօրինակություններում փոխարինել են մյուսների՝ ավելի վրատահելի թվացող տվյալներով»⁷։ Դեռևս միջին դարերում գրիչները փորձել են տալ նարեկացու Մատյանի ճշգրտված բնագիրը, ձգտել են ձեռքի տակ ունենալ ընտիր ձեռագրեր, համեմատել և համադրել են այդ օրինակները և ըստ իրենց իմացության և մակարդակի՝ ընդօրինակել ձեռագիրը։ 1319 թ. Վարդան գրիչը Ակնների վանքում ընդօրինակել է Մատյանը (ձեռ. № 3589)։ Ձեռագրի լուսանցքներում նա բարեխղճորեն նշել է այն տարրնթերցվածները, որոնք եղել են իր օգտագործած ձեռագրերի մեջ. դրանք ոչ թե անտեսել է իբրև խոտելի և ավելորդ, այլ արտագրել է հանուն ճշգրտության։ Վարդանի համար դժվար է եղել մերժել այդ տարբերությունները և, կողմնորոշվելով դեպի գաղափար օրինակներից մեկը, լուսանցքում նշել է մյուսների ընթերցվածը։ Իր այդ աշխատանքի մասին նա գրել է այսպես. «Բազմավիշտ ոգուով և խալարեալ մտաբան և յոյժ ցաւած մարմնով գրեցի, բայց արինակաց անփոյթ շարարի, թէպէտ և ի բազմաց վկայեալ էին արինակքս, այլ յերից և ի շորից, է գի և ի հնգից արինակաց, որչափ կարացի, ուղղեցի» (ՄՄ, ձեռ. № 3589, էջ 344ր)։ Կարելի է բերել նման բազմաթիվ այլ վկայություններ, բայց հարկ չեմ համարում։ Այդ բոլորը գալիս են հավաստելու մի բան. մեզ հայտնի բազմաթիվ ձեռագրերի հիշատակարաններից և հիշատակություններից չկա մեկը, ուր խոսք լիներ նարեկացու ինքնագրից ընդօրինակված լինելու, ավելին՝ նարեկացու ինքնագրի մասին։

Արդ, վերադառնալով նարեկացու ինքնագրի հարցին։ «Առանձին ձեռագրերի մասին խոսք է եղել,— գրել եմ ես գիտաբանական բնագրի հրատարակության առաջաբանում,— թե իբր դրանք նարեկացու ինքնագրերն են։ Քյոպրիսի մի ձեռագրի մասին հայտնում է Միքայել Չամչյանը 1769 թվականին Կոստանդնուպոլսից Վենետիկ՝ Ստեփանոս Ագոնցին հղած նամակում. «Առաքեցի զմի նարեկ ի վանս, զոր ետ Անտոն եղբայրս։ Եւ թէ վասն է՞ր, ծանիցիք. քանզի Մուրադօղլու Գասպար սառաֆն ասացեալ է Անտոն եղբորս, թէ ի ռուբր Կարապետին վանքն կայ հնագույն ձեռագիր նարեկ, զորմէ ասեմ լինել ձեռագիրն նոյն սրբոյն։ Եւ ես առաքեցի անդր զմի նարեկ տպագրեալ, և զտարբերութիւնսն նշանեցին անդէն և առաքեցին առ իս»։ Չամչյանը չի տեսել բուն ձեռագիրը, նրան հայտնել են, որ հնագույն այդ ձեռագիրը նարեկացու ինքնագիրն է։ Մենք չենք տեսել Վենետիկ ուղարկված այն տպա-

⁷ Նույն տեղում, էջ 15։

գիրը, ուր ըստ այդ ձեռագրի նշված են եղել տարբերությունները: Կարծում ենք, սակայն, որ հնագույն այդ սրբացված ձեռագիրը կարող էր Նարեկացուն համարվել նաև ավանդաբար: Եվ ահա թե ինչու: Մատյանի 1774 թ. տպագրության հրատարակիչները հայտնում են, որ Գասպար Մուրատյանցը (անշուշտ նույն ինքը՝ Մուրադօղլին—Ա. Ղ.), որը նախաձեռնել էր այդ տպագրությունը, որպես թե ձեռք էր բերել Նարեկացու երկու ինքնագիր Նարեկ-«...ի քաղաքաց քաղաքաց Հայաստանեայց և ի բուն իսկ Մոկաց գաւառէ մեծաշան փութով գտեալ օրինակս ընտիրս, հնագոյնս, անձեռամբմս, յորոց ղերկուցն սրբոյս իսկ պնդէին լինիլ ձեռաց գիր...»: Հրատարակիչները ևս բավարարվել են միայն հայտարարությամբ՝ առանց բանասիրական որևէ կովան բերելու⁸:

Շ. Նաղարյանի հոգվածը հիմնականում նվիրված է Մոկաց գավառում հայտնաբերված այս ձեռագրին, որը համարվել է Նարեկացու ինքնագիրը: Այսպես, ինչպես համար նա բերում է երկու վկայություն. ա) «Ողջունագրութիւն վասն սրբագրութեան Նարեկին սրբոյ, ի սորին հարազատէ և յերջանիկ լաղակերտէ տեառն Յակոբայ աստուածաբան վարդապետէ գրեալ» նամակը՝ ուղղված Կտուց անապատի վանահայր Կարապետ վարդապետին, գրված 1769 թ. և բ) այդ նամակի մասին Մարտիրոս սարկավազի գրած մի բացատրություն, վերնագրված այսպես՝ «Ի ճշմարտասէր տիրացու Մարտիրոս յիւսկուտար ի սուրբ Խաչ եկեղեցւոյ սարկաւազ պատուելի վարժապետէն ծանուցումն զըստառմանէ ի վերոյգրեալ ողջունագրութեան»:

Շ. Նաղարյանի վկայակոչած «պատմական այս թանկագին տեղեկությունները» ամենևին էլ նորույթ չեն, թե ձեռագիր և թե՛ տպագիր աղբյուրներից հայտնի են աշխատասիրողներին և նրանք ըստ հարկի անդրադարձել են դրանց, գտնելով, սակայն, որ դրանք բավարար հիմքեր չեն տալիս Նարեկացու ինքնագրի գոյությունը հաստատելու համար: Բայց խոսենք ըստ էության:

Իր ծանուցման մեջ Մարտիրոս սարկավազը հայտնում է, որ «ի հերոնհ հետէ» յստեղը ցանկանում էին տպագրել Նարեկը՝ նոր և ստույգ սրբագրություն: Երբ Նարեկը չէր տպագրվում, առաջինը Նարեկին սրբոյ, յորոց մի էր և Մուրատյանց Գասպար ամիրայն. որոյ սակս գրէ առ Կտուցու անապատի Կարապետ երանաշնորհ վարդապետին, ինչպես տեսնում ենք մի գիտակ անձ ուղարկի Մոկաց գավառ՝ Նարեկացու ձեռագիրը գտնելու և տպագիր օրինակի հետ համեմատությունը ուղարկի իրեն: Վանահայրն այդ առաքելությունը հանձնարարում է Հակոբ աստվածաբան վարդապետին: Նա որոնում և գտնում է ձեռագիրը, համեմատում է տպագրի հետ և մի նամակ էլ հղելով Կարապետ վարդապետին՝ ուղարկում է վանահորը: «Եւ նոյն Կարապետ վանահայր վարդապետն զնոյն գիր քնդ սրբագրեալ Նարեկին յղեաց Գասպար ամիրայնին, որպէս ասացաք ՌՄԺԸ (1769) թուին մերոյ»⁹: Ըստ Մարտիրոս սարկավազի՝ նույն այս ուղարկված օրինակից էլ տպագրվել է 1774 թ. Նարեկը. «ուստի և տպագրեցաւ իսկ Նարեկն սուրբ»:

Կարծես տարակուսելու ոչ մի բան չկա. Հակոբ վարդապետը որոնել ու

⁸ Նույն տեղում, էջ 176—177:

⁹ Թյուրիմացությունից խուսափելու համար բերում են ամբողջ հատվածը «Ի հերոնհ հետէ կամ էր բազմաց, և ցանկային բազումք զի սրբագրեսցի Նարեկն սուրբ, յորոց մի էր և Մուրատյանց Գասպար ամիրայն. որոյ սակս գրէ առ Կտուցու անապատի Կարապետ երանաշնորհ վարդապետին, զի առաքեսցէ զոմն հանճարեղ յերկիրն Մոկաց՝ առ ի գտանել ղձեռացագիրն երանելուն Գրիգորի Նարեկացւոյն, և անտի սրբագրեալ ղՆարեկն սուրբ յղիցէ մեզ: Տարմէ առաքեցաւ տէր Յակոբ մեծիմաստ և աստուածաբան վարդապետն երանելի. և որոնեալ եգիթ և սրբագրեալ ի նմանէ, յղեաց նոյն ամիրայնին, ուստի և տպագրեցաւ իսկ Նարեկն սուրբ: Բայց յառաջ քան զայս՝ գրէ առ տէր Կարապետ վարդապետն, թէ որպէ՛ս եգիթ և որպէ՛ս հաւատարմացաւ նոյն լինել: Եւ նոյն Կարապետ վանահայր վարդապետն զնոյն գիր քնդ սրբագրեալ Նարեկին յղեաց Գասպար ամիրայնին, որպէս ասացաք ի ՌՄԺԸ թուին մերոյ» (ՄՄ, ձեռ. № 5027, էջ 162ա—162բ):

գտել է նարեկացու ինքնագիրը և, ինչպես ինքն է հայտնում իր նամակում՝ «հանգույն գաղափարին գտեալ» սրբագրել է և ուղարկել իր վարդապետին, սա էլ՝ Գասպար ամիրային և այդ օրինակից էլ տպագրվել է նարեկը։ Բայց իսկապե՞ս Հակոբ վարդապետը գտել էր նարեկացու ինքնագիրը։ Ի՞նչ է ասել ինքը՝ Հակոբ վարդապետը։ Խրախուսված իր վարդապետի հանձնարարութեամբ, նա մեկնում է Մոկաց երկիր և «սոր ի սոր սահուտ խոշոր ռահի ուշ ի մտի եղեալ արագ արշամամբ»՝ հասնում Մոկք։ Նա լինում է Քավությանց վանքում, այցելում է «ի վանսն Տիրայնոյ մածեալ նշանին՝ գահաւանդ վայրին Ապարանից գահոյին» և, վերջապես, գտնում է որոնած ձեռագիրը։ Գրտածոն, սակայն, խորին տխրութեամբ է համակում Հակոբ վարդապետին. ձեռագիրը հիշատակարան չունի, նա համոզված չէր, որ գտել է նարեկացու ինքնագիրը։ Ահա ինչ է գրել նա. «Բայց զի իմս պատահեալ տփոյս լուսածորար՝ եղէ վտարանդեալ. ո՞չ յաւակնի լրբեալ և ո՞չ վստահաբար ձեռնամուխ եղեալ, այլ կսկծամբ մտախոյզ կէի աղջատեալ սակս չունելոյ ծիր յիշատակի, որով լինիւր բանս մեր հաւաստի...»¹⁰։ Սա է փաստը։ Բայց ի՞նչ է տեղի ունենում, որը փարատում է Հակոբ վարդապետի կասկածը։ Նրան հանդիպում է մի ծերունի, որը պատմում է իր հիվանդ դստեր մասին, և Հակոբը որոշում է նարեկ կարդալ հիվանդի վրա՝ փորձել իր գտած ձեռագրի գորութիւնը։ «...Եւ մինչ կայի ներ սոյն խորհրդեան, ծեր ոմն ժամանեաց գիմիս յանդիման,— գրում է Հակոբ վարդապետը,— ժտէր, աղերսէր սակս դստերն իւրոյ քառամեայ ամանակաւ յողնանկական ախտիւք իլիոնական, քճաւին անդամօք ընդարմ լուծական. ոչ ոգումն լեզուի և ոչ լիս ունկի, ոչ ձեռս տարբերեալ և ոչ յոտս յենեալ, այլ հանգույն կոճեղ խանձողեցելոյ՝ դիասահ ղնիւր ընդարմակի, մահու ցանկ արփակ, քան թէ կենաց ակն կալեալ»¹¹։

Հակոբը նարեկ է կարդում և ուղևորվում դեպի Տիրայնո վանքը։ Ճանապարհին ծերունին հասնում է նրան և հայտնում, որ նրա հեռանալուց հետո իր դուստրը ոտքի է կանգնել՝ «յենեալ ի յոտին և բան ի լեզուին» խոստովանել ու հաղորդվել և «ի տէր հանգեալ»¹²։ «Սակս որոյ և մերս հաւատ ընկալեալ»՝ Հակոբը ձեռնամուխ է լինում ձեռագիրը տպագրի հետ համեմատելուն։ Սա է իրողութիւնը։ Սա է, որ ներշնչել է Հակոբին՝ հավատալու, որ իր գտած ձեռագիրը նարեկացու ինքնագիրն է։ Այս պատմութեանն է, ահա, որին անվերապահ հավատ է ընծայել նաև Մարտիրոս սարկավազը։ Բայց ինչ թույլատրելի էր XVIII դարի հոգևոր այդ անձանց, կարծում եմ, ժամանակավոր է այսօրվա բանասերի գիտական եզրակացութեան համար։ Ներողութիւն խնդրելով՝ ստիպված եմ ասել, որ Շ. Նազարյանը որոշակի իմաստափոխութեամբ է աշխարհաբար տալիս իր օգտագործած աղբյուրների գրաբար մի քանի արտահայտութիւններ։ Այսպես՝ նա գրում է, թե Կարապետ վարդապետն ուղարկում է Հակոբ վարդապետին և «վերջինս ամենայն ջանաւիրութեամբ որոնում, «հրաշիւք» գտնում է «նարեկի» ինքնագիրը, համեմատում է և արտագրութիւնը պատրաստի ուղարկում Գասպար ամիրային» (էջ 106) կամ՝ Հակոբ վարդապետը «որոնում և ի վերջո «հրաշիւք» գտնում է «Մատեանի» «հավատարիմ ինքնագիրը» (էջ 107), ուր ըստ Շ. Նազարյանի խոսքը վերաբերում է հրաշքով ձեռագիրը գտնելուն, մինչդեռ ըստ սկզբնաղբյուրի խոսքը «նարեկացու ըստ ձեռագիրսն հրաշիւք ճշգրտեալ»¹³ լինելու, հրաշալի կերպով տպագրի հետ համեմատելու մասին է։ Նույն մտեցմամբ Շ. Նազարյանը Մարտիրոս սարկավազի «գրէ առ տէր Կարապետն, թէ որպէ՞ս եգիտ և որպէ՞ս հաւատարմեցաւ նոյնն լինել» արտահայտութիւնը տալիս է այսպես, թե «ինչպես գտավ «նարեկացու հավատարիմ ինքնագիրը» (էջ 106), թե Հակոբ վարդապետն էր, որ Մոկաց գավառում հայտնաբերել է նարեկացու «հավատարիմ ինքնագիրը» (էջ 108), մինչդեռ խոսքը վերաբերում է

¹⁰ ՄՄ, ձեռ. № 950, էջ 44 բ։

¹¹ Նույն տեղում, էջ 44բ—45ա։

¹² Նույն տեղում, էջ 45 ա։

¹³ ՄՄ, ձեռ. № 10185, էջ 857ա։

Հակոբ վարդապետի համոզվելու, որ ինքը գտել է նույն այն ձեռագիրը, որը համարվել է Նարեկացու ինքնագիրը: Իսկ թե ինչպես էր համոզվել՝ տեսանք վերևում: Այս ողջ պատմությունը ավելի ճիշտ, զուսպ և համոզիչ է ներկայացրել Պ. Խաչատրյանը Մատյանի դիտարկման հոր բնագրի առաջաբանում, բան Ե. Նաղաբյանը իր հոդվածում: «1774 թ. «Նարեկի» հրատարակության նախապատրաստական աշխատանքների մեջ ներգրավված բազմաթիվ աշխատողների շրջանում,— գրում է Նաղաբյանը,— առանձնանում է մեծ խմբատ Հակոբ վարդապետ նարեկագետի և բնագրագետի անունը: Նա էր, որ Մոկայ գավառում, բազմաթիվ տառապանքներ կրելով, հայտնաբերել էր Նարեկացու «հավատարիմ ինքնագիրը» և տպագրության հանձնել բնագիրը»¹⁴ և այլն: Խոսկով 1807 թ. Կ. Պոլսի Մատյանի տպագրության մասին, Պ. Խաչատրյանն անդրադառնում է, թե՛ Հակոբ վարդապետի նամակին և թե՛ Մարտիրոս սարկավազի ծանուցմանը: «Արհեստական խրթնությունը և վերամբարձ ոճով գրված նամակ է, ուղղված Կոնստանդնուպոլսի Կարապետ վարդապետին: Հանդիպում է նաև ձեռագրերում (տե՛ս Մաշտոցյան մատենագրան, ձև. № 950, 5037, 5066): Նամակից և նրան հաջորդող գրությունից (էջ 500—01) պարզվում է, որ Կարապետ վարդապետը Հակոբին ուղարկել է Մոկայ գավառ՝ «ի գիտ բուն ձեռագրի»՝ Նարեկ մատենի սրբորոյն Դրիգորի»։ Հասնելով Մոկա՝ Հակոբը գտել է Նարեկի մի ձեռագիր, որ հեղինակի... ինքնագիրն է եղել: «Փորձել է» նրա հրաշագործ ուժը՝ «բուժելով» մի ճերմակ հաշմանդամ դստերը, որով համոզվել է, թե այն Նարեկացու իսկ ձեռքով է գրված... Արտադրել է և իր ընդօրինակությունն ուղարկել Կարապետ վարդապետին: Իսկ վերջինս իր հերթին այն 1769 թ. ուղարկել է «պիս» Գալստար ամիրա Մուրատյանցին (Մատյանի 1774 թ. հրատարակության մեջ նշանակում է)։ Հակոբի ընդօրինակությունը, բնականաբար, օգտագործվել է յոհններդ տպագրող պատրաստելիս: Նամակին հաջորդող գրության մեջ պատմվում է Տիգրանակերտում Հակոբ վարդապետի նահատակության մասին»¹⁵:

Պնդել, որ Հակոբ վարդապետը գտել է Նարեկացու ինքնագիրը, որ 1774 թ. Նարեկի տպագրության հիմքում դրվել է այդ բնագիրը, նշանակում է առանց խուրամուխ լինելու, պարզամտորեն հավատալ Հակոբ վարդապետի՝ անվանի մատենագետ Ա. Ղազիկյանի բնորոշմամբ «այլանդակ լեզվով», «հրաշապատում» և «ցուցանք նամակին»¹⁶, ուր ցանկալին ներկայացված է իրեն խոստովություն: Նշանակում է մի անհիշատակարան ձեռագիր անհիմն կերպով իբրև Նարեկացու ինքնագիր ընդունել, հավատ ընծայել Մարտիրոս սարկավազի շռայլած գովեստներին, որոնք թելադրված են Հակոբին նահատակի լուսապսակով սրբացնելու միտումով, բան թե վստահել հրատարակչին: Նրան այն լուրջ հավաստմանը, որ 1774 թ. Նարեկը տպագրվել է «նորապէս սրբագրեալ» համեմատութեամբ հնագոյն և ընտիր ընտիր ձեռագիր օրինակաց» իսկ այդ օրինակների թիվը հասել է երեսունի. «Թիւ օրինակացն հնոց և նորոց ժամանել ի համար երրեակ տասանց»¹⁷:

Ես դրել եմ, որ Նարեկացու ինքնագրերի մասին հայտարարության համար «ի թիվս այլ հանգամանքների, կարող էր հիմք դառնալ նաև Դրիգոր անունով որևէ գրչի անվան շփոթությունը Նարեկացու անվան հետ»¹⁸: Իմ խոսքը չի վերաբերում Հակոբ վարդապետի գտած ձեռագրին, և իզուր է Ե. Նաղաբյանը շտապում առարկել, թե «այսպիսի թուրիմացությունը բացառված է, քանի որ Հակոբ վարդապետի ձեռքի տակ եղած ինքնագիրը հիշա-

14 Ե. Նաղաբյան. նշվ. հոդվածը, էջ 108:

15 Դրիգոր Նարեկացի. Մատենան ողբերգութեան, էջ 208:

16 Ա. Ղազիկյան. Հակոբյան Նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի. հ. 1, Վենետիկ, 1909—1912, էջ 491:

17 Դրեք ազոթից սրբոյն Դրիգորի Նարեկացու հոգևիր հոնտորի, էջ 12:

18 Դրիգոր Նարեկացի. Մատենան ողբերգութեան, էջ 176—177:

տակարան շի ունեցել»¹⁹։ Այո, ճիշտ է՝ Բայց չէ՞ որ 1774 թ. տպագրի առաջարկում խոսվում է երկու ինքնագիր ձեռագրեր լինելու մասին, և հայտնի չէ, թե երկրորդ ձեռագիրն ինչի հիման վրա է համարվել ինքնագիր։ Բայց որպեսզի խոսքս չթվա անհիմն հայտարարություն, բերեմ մի վկայություն։ Մատենադարանի № 10182 ձեռագիրը գրվել է Սեբաստիայի Գրո անապատում, 1346 թ., գրիչն է Գրիգոր քահանան։ Պահպանվել են բազմաթիվ հիշատակագրություններ և գլխավոր հիշատակարանը, ուր մասնավորապես ասված է հետևյալը. «Ամենայն յօժարութեամբ զաշխատութիւն և զջան առաւել քան զկար յանձին կալեալ՝ ես տառապեալս ըստ ոչ արժանեաց քահանայ Գրիգոր ... շնորհիւ տեառն սկսայ գրել զկտակ մաղթանաց ... մեծանուն և երանեալ վարդապետին Գրիգորի Նարեկացուն» (էջ 208 բ)։ Այստեղ շփոթելու բան չկա։ Բայց բացառված չէ նաև, որ «ես ... Գրիգոր ... սկսայ գրել զկտակ մաղթանաց ... «որևէ գրիչ, ընթերցող ընկալեալ ուղղակի՝ իբրև Նարեկացու ինքնագիր։ Դարեր անց այս ձեռագիրն անցել է Ստեփանոս տիրացուն և նա թողել է այսպիսի հիշատակարան. «Ի ժամանակի նախնեաց իմոց Մաքսպետեան Սաֆար աղայի որդի մեծն տէր Յակոբն մեր այս Նարեկս առեալ է Սեբաստիոյ վանքն Նարեկացոյ աշակերտ Գրիգոր քահանայն. բերեալ է մեր տունն իւրեան յորդոցն տէր Յովսեփին և տէր Աղէքսանդրին. և նոքա առ աստուած փոխեալ են, մնացեալ է մեծ տէր Յարութիւն քահանային, և սորա որդին տէր Ալեքսան իմ ծնօղիս, որոյ տէր լուսաւորէ զհոգիս նոցա, ամէն։ ... Ես ԶԸ (88) տարեկան ծերունի յանձնեցի յորդոցս, նոքա ալ սոյնպէս իւրեանց որդոցն մինչև յաւիտեան. որ ի Հայոց Թաւականի ՇՂԾ (595) թվին գրեալ է Նարեկին վերջն» (ՄՄ, ձեռ. № 10182, էջ 1բ)։ Ըստ տիրացու Ստեփանոսի Գրիգոր քահանա գրիչը եղել է Նարեկացու աշակերտը և, որովհետև բուն հիշատակարանի ՉՂԾ (795—1346) թ. նա կարդացել է ՇՂԾ (595—1046), ապա նույնիսկ տրամաբանական է դառնում, որ գրիչը կարող էր լինել Նարեկացու աշակերտը և այլն։ Տե՛ս նաև շփոթությունը կարող էր ծնել նաև ինքնագիր լինելու մասին ավանդություն և անցնել սերնդեսերունդ։ Եվ այնուհանդերձ ես հարկ եմ համարել գրել, որ «չի բացառվում, սակայն, որ կարող էր պահպանված լինել նաև Նարեկացու ինքնագիրը»²⁰։

Շ. Նազարյանի քննադատական դիտողություններից մեկն էլ վերաբերում է հնատիպ տպագրությունների օգտագործմանը գիտաքննական նոր բնագրի պատրաստման ժամանակ։ «Ցավոք, — գրում է նա, — Մատենան ողբերգութեան» 1985 թ. գիտական հրատարակության աշխատասիրողները «Նարեկի» հնատիպերը, այդ թվում նաև «նոր մակարդակ նշանավորած», 1774 թ. տպագիրը, դուրս են թողել համեմատական բնագրից՝ բավաբարվել ծանոթագրումներով»²¹։ Նազարյանի այս դիտողության այսպես ասած տեսական հիմքն այն է, որ ըստ նրա «ամեն մի հնատիպ գիրք ձեռագրի արժեք ունի»։ Մինչդեռ ինչպես ամեն մի օրենք ունի իր բացառությունը, ըստ էության, Նարեկացու Մատյանի տպագիրների օգտագործման հարցում էլ աշխատասիրողները ցուցաբերել են ուրույն և, մեր խորին համոզմամբ, արդի բնագրատիպական նվաճումներին համապատասխան մոտեցում։ Մատյանի ավելի քան 60 տպագրություններից միայն 8 տպագիրներ են, որ ունեն առանձին միավորների արժեք, անմիջականորեն ծագում են բուն ձեռագրերից կամ բնագրային տարբերություններ ունեն՝ ճշգրտված ձեռագրերի հիման վրա։ Մնացած բոլորը վերատպություններ են։ Այսպես՝ Կ. Պոլսի 1700—1702 թթ. առաջին տպագրության բնագիրը պատրաստել է Մինաս Ամդեցին Երուսաղեմի ձեռագրատան մեկ և էջմիածնի, Սաղմոսավանքի, Խորվիրապի և Սևանա անապատի 5 այլ ձեռագրերի օգտագործմամբ։ Քանի որ այդ ձեռագրերը հասել են մեզ, ուստի դրանք օգտագործվել են նաև մեր կողմից։ Իսկ ինչ սկզբունքներով է հրատարակել Մինաս Ամդեցին, ինչ փոփոխություններ է

¹⁹ Շ. Նազարյան. նշվ. հոգվածը, էջ 111։

²⁰ Գրիգոր Նարեկացի. Մատենան ողբերգութեան, էջ 177։

²¹ Շ. Նազարյան. նշվ. հոգվածը, էջ 112։

կատարել և այլն, ակներև է տպագրից։ Ուստի տպագիրը չունի բնագրային առումով այնպիսի տարբերություններ և տարբերակներ, որոնք հայտնի չլինեին ձեռագիր աղբյուրներից։ Աննշան շեղումները, որոնք կարող էին լինել հրատարակչի միջամտության արդյունք կամ տպագրական վրիպակներ, աշխատասիրողները տվել են ժանոթագրությունների բաժնում և սրա մեջ դատապարտելի ոչինչ չկա։ Հնատիպ հրատարակությունների նկատմամբ աշխատառնությունների ունեցած այդ մոտեցումը խորապես պատճառաբանված է ձեռագրերի ընձեռած հնարավորություններով։ Տպագիրների նույնաբնույթ տպագրությունները պարզապես պիտի ժանրաբեռնեին տարբերակներով և ռաժիմով։ Ահա թե ինչու Նարեկացու հնատիպ տպագրությունները, որոնք իրականացվել են ձեռագրերի հիման վրա, ձեռագրերի համեմատությամբ բացի, հենվել են նախորդ տպագրությունների վրա, իրենց վրա կրում են հրատարակչի լուրջ մոտեցման կնիքը, և դա է, որ աշխատասիրողները ձգտել են առավել հստակ ներկայացնել ժանոթագրությունների մեջ։ Եվ այնուամենայնիվ, պետք է ասել, որ գիտաքննական նոր բնագրի աշխատասիրողները լրջորեն հաշվի են առել 1774 թ. տպագրության առանձին նվաճումներ, որոնք քննադատաբար օգտագործել են նոր տպագրության մեջ։ Այսպես՝ Մատյանի գլուխները բաժանված են հատվածների՝ Ա, Բ, Գ և այլն։ Ոչ մի ձեռագիր, սակայն, չունի այդպիսի բաժանում։ Հատվածաբանում չունեն նաև մի շարք տպագիրներ։ «Հատվածների բաժանման ավանգույթը պատկանում է 1774 թ. Նարեկի հրատարակչներին։ XIX դարից սկսած մինչև այսօր հետագա բոլոր հրատարակությունները պահպանել են այդ ավանդույթը։ Մենք՝ նույնպես»։ Եվ փորձել ենք հիմնավորել, «որ հատվածաբաժանման համար Նարեկացին ունի ուղղակի ակնարկներ»²² և այլն։ 1774 թ. հրատարակությունը տողատված հրատարակություն չէ, և, բնականաբար, մենք այս դեպքում էլ հետևել ենք Նարեկի Բուենոս Այրեսի 1948 թ. տողատված հրատարակությանը, որն իրականացրել է Գարեգին եպիսկոպոս Խաչատուրյանը, անշուշտ, դարձյալ հանդես բերելով քննադատական մոտեցում։ Դավանաբանական-մեկնաբանական մի քանի գլուխներ տվել ենք արձակ (1Գ, 2Ե, 2Բ և 2Գ)։ Կարիք չկա, սակայն, այստեղ մանրամասնել այն սկզբունքներն ու նոր աշխատանքները, որոնք գործադրել են աշխատասիրողները միսիայն մի ազնիվ նպատակով՝ որքան հնարավոր է ստույգ և հարազատ տալ Նարեկացու Մատյանի բնագիրը։ Որ ոչ մի հրատարակություն չի կարող լինել անթերի, սա վեր է ամեն կասկածից. որ ամեն մի նոր հրատարակություն պետք է ձգտի առավել կատարյալ դարձնել գրական հին հուշարձանի բնագիրը, սա՝ նույնպես։ Սակայն առանց խորամուխ լինելու Մատյանի գիտաքննական նոր բնագրի նորությունների մեջ, առանց լրջորեն քննելու այդ հրատարակության սկզբունքների էությունը, առանց մեկ իսկ բառի բնագրային ձգձգումների դեմ առարկելու առանց թափանցելու այն ժանրակազմի ժանոթագրությունների մեջ, ուր իր արտացոլումն է գտել Նարեկացիագիտության անցած ողջ ճանապարհը, ազդարարել «գիտական հաջորդ հրատարակության» մի պահանջ, որի հիմքում դրված լինի նաև 1774 թ. տպագրությունը, նշանակում է պարզապես չցանկանալ տեսնել գիտական այն նոր մակարդակը, որով սերունդների դատին է հանձնված Գրիգոր Նարեկացու «Մատեն ողբերգութեան» երկի գիտաքննական նոր բնագիրը։

²² Գրիգոր Նարեկացի. Մատեն ողբերգութեան, էջ 195։

К ВОПРОСУ ОБ ОРИГИНАЛЕ РУКОПИСИ
«КНИГИ СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ» ГРИГОРА НАРЕКАЦИ

А. А. КАЗИНЯН

Резюме

Под таким же заглавием была опубликована статья доктора филол. наук Ш. Л. Назарян («Историко-филологический журнал», 1987, № 4, с. 104—112), в которой автор пытается доказать, что в основе константинопольского издания «Книги скорбных песнопений» 1774 г. лежал оригинал рукописи Григора Нарекаци, найденный вардапетом Акопом, и что об этом свидетельствует краткое извещение дьякона Мартirosа, прилагаемое к письму вардапета Акопа. Автор настоящей статьи, рассматривая аргументы и рассуждения Ш. Л. Назарян, продолжает придерживаться мнения, высказанного в предисловии к новому научно-критическому изданию «Книги скорбных песнопений» (Ереван, 1985): рукопись, найденная вардапетом Акопом и не имеющая памятной записи, считалась оригиналом Нарекаци только по преданию. Что касается издания «Книги скорбных песнопений» 1774 г., то оно было осуществлено на основе почти 30 рукописей, а также с частичным использованием предыдущих изданий.